


ԴՊԿՏՈՐ ԳԵՎՈՐԳ ԱՐԳԱՐՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)*

2020 թ. լրացավ բանասեր, պատմաբան, ձեռագրագետ, աղբյուրագետ, թարգմանիչ, բ. գ. դ., ԽՍՀՄ, ապա Հայաստանի գրողների միության անդամ, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի հնագույն աշխատող Գևորգ Վարդի (Վահանի) Արգարյանի ծննդյան 100-ամյակը:



Գ. Արգարյանը ծնվել է 1920 թ. սեպտեմբերի 14-ին Ալեքսանդրապոլի գավառի (ներկայումս՝ Շիրակի մարզ) Հոռոմ գյուղում: 1937 թ. ավարտել է Լենինականի № 50 երկաթուղային միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) պատմության ֆակուլտետը: 1940 թ. նա աշխատել է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի բնագրերի ուսումնասիրման և հրատարակման բաժնում, որն այն ժամանակ գործում էր Հանրային գրադարանի շենքում:

21 տարեկան Գևորգը 1941 թ. 5-րդ կուրսից զորակոչվել է ռազմաճակատ: 1941 թ. օգոստոսից մինչև 1942 թ. հունվարը սովորել ու ավարտել է Բաքվի հետևակային ուսումնարանը, ստացել լեյտենանտի կոչում և ականանետային վաշտի հրամանատարի տեղակալի պաշտոնով ուղարկվել ծառայության 263-րդ հրաձգային դիվիզիա: 1942 թ. սեպտեմբերին «Красный Кавказ» հաճախավով շատ հայրենակիցների հետ օգնության է մեկնել Գերենջիկի սեծովյան ափը և նավաստիների զորամասի հետ մասնակցել թշնամու դեմ մղվող կատաղի մարտերին¹:

1942 թ. հոկտեմբերին Գևորգը վիրավորվել է ոտքից և գերի ընկել. ինչպես ինքն է գրել հետագայում՝ «բեկորները խճճվեցին բազում կիլոմետրեր չափած ոտքիս կոշտ մկանների մեջ և չկարողացան այլևս այնտեղից դուրս գալ: ... Ընկերներ ենք դարձել: Բայց, իհարկե, ես չեմ վստահում այսպիսի ընկերությունը»²: Մինչև 1945 թ. ապրիլը եղել է Գերմանիայում և Փաշխատական համակենտրոնացման ճամբարում կրել ռազմագերու դառն ճակատագիրը: Գերության հոգեկան ու ֆիզիկական տաժանքի մեջ ցույց հույսի

* Ներկայացվել է 03. III. 2021 թ., ընդունվել է տպագրության 29. III. 2021 թ.:

¹ Փ. ԵՆԳՈՂԱՆ. Երևանի համալսարանը Մեծ Հայրենականի տարիներին, Երևան, 1975, էջ 84–85, Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ. Մուսաները չլուեցին, Երևան, 1989, էջ 233:

² Գ. ԱՐԳԱՐՅԱՆ. Մայրս վեց անգամ գնաց կայարան. – «Գրական թերթ» (Երևան), 10. XI. 1961:

մի նշույլ՝ գերմանական հայագիտության պատկերը: Իր հարուստ համալսարանական գիտելիքներով, բայց գյուղական դպրոցի անպաճույճ գերմաներենով, բախտի բերմամբ Գևորգը չափեց գերմանացի սպա, երիտասարդ հայագետ Ռուֆ Արեքսանդեր Մայերի համակրանքը, ով լավ տեղյակ էր գերմանացի նշանավոր հայագետների գործերին: Ինչպես Գևորգն էր պատմում հետագայում, երկուսով կազմեցին գերմաներեն—հայերեն բառարան, որը ոչնչացավ տպարանում 1945 թ. ռմբակոծման ժամանակ: Ահա թե որտեղից է գալիս գերմանական հայագիտության նկատմամբ այն նախասիրությունը, որը նրա առջև բացեց մի ուրիշ՝ ավելի բարձր Գերմանիա:

1945 թ. ապրիլին «... դաշնակից պետությունների բանակները ազատագրեցին նաև մեր ճամբարը, — գրում է Գ. Աբգարյանը, — ինձ բախտ վիճակվեց վերադառնալ մերոնց մոտ և ծառայել 93-րդ դիվիզիայում ... է՛, գլխովս անցածը որ լրիվ պատմեմ, մազերդ կճերմակեն»³:

Դրանից հետո նա զորացրվել է և շարունակել իր կիսատ թողած կրթությունը համալսարանում: 1946-ին ավարտելով ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետը՝ ընդունվել է Գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի ասպիրանտուրան: Այստեղ նրա գիտական ղեկավարն էր անվանի բանահյուսագետ Կարապետ Մելիք-Օհանջանյանը, որը 1915–1917 թթ. եղել էր Գերմանիայում և որպես ազատ ունկնդիր սովորել Բեռլինի համալսարանում, եղել գերմանացի հայագետ, Բեռլինի համալսարանի հայագիտական մամբրոնի հիմնադիր Յոզեֆ Մարկվարտի ուսանողը:

Ստալինյան վարչակարգը ռազմագերիներին դիտում էր իբրև հայրենիքի դավաճաններ և հաղթական պատերազմին հաջորդած համատարած աքսորի ժամանակ՝ 1947 թ. հոկտեմբերի 18-ին, Գևորգն անակնկալ ձերբակալվում է: Հայրենական պատերազմին վեց զավակ ուղարկած ծնողները փոխանակ պատվի արժանանալու՝ հատկապես զոհված զավակների համար, մինչև ցմրուր ճաշակեցին դառը ճակատագիրը: «Մայրս վեց անգամ գնաց կայարան և վեց որդի ուղարկեց պատերազմ: Դրանից հետո նա և՛ մայր էր, և՛ տան տղամարդը»⁴: Իսկ հայրը՝ Վարագը (Վահան), Գևորգի ձերբակալման օրերին վախճանվեց:

Ո՛չ գերությունից փախուստը, ո՛չ երեք հարազատ եղբայրների կորուստը, ո՛չ հոր մահը 1947 թ. չփրկեցին Գևորգին աքսորից: Երևանում ձերբակալված Գևորգին հարցաքննելու ժամանակ քննիչը, իբր, անփութորեն, գրասեղանին էր դրել Արթիկի շրջանային լրագիրը, որի բացված էջի վրա գրված էր նրա հոր մահվան հայտարարությունը: Եվ սա արված էր նրան հոգեպես կոտրելու և ցուցմունք կորզելու դիտավորությամբ: Ի վերուստ սահմանված հրահանգով, առանց դատավարության, նա դատապարտվեց 10 տարվա ազատազրկման, որից 8 տարին անցկացրեց Վոլգա գետի ափին գտնվող Գորկի քաղաքի մոտ Սուխոբեզովոյե (չոր-Ջրագուրկ) կոչված կալանավայրում: Շատերը չէին դիմանում աքսորի տաժանակիր պայմաններին: Գևորգը դիմացավ շնորհիվ իր համալսարանական ընկերուհի՝ Ալի-

³ Ս. Գրիգորյան. *նշվ.* աշխ., էջ 233:

⁴ Գ. Աբգարյան. *Մայրս վեց անգամ գնաց կայարան*, Գ. Абгарян. Мать. — «Известия» (М.), 28. II. 1962.

նա Սեղբոսյանի հոգատարությունը, որի անձնավորությունը և դժվարին պայմաններում ներքին գործերի խիստ հսկողությունը թույլատրված նրա այցելությունները հոգեկան կորույթ էին հաղորդում սիրելի անձնավորությանը: Հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ, այդ թվում նաև ընտանեկան՝ Ալինան, ով սովորել էր Մոսկվայի ասպիրանտուրայում և արդեն ֆրանսերեն լեզվի դասախոս էր ԵՊՀ-ում, այդ 8 տարիների ընթացքում 12 անգամ այցելեց Գևորգին՝ տաք շորեր և անհրաժեշտ պարեն հասցնելով նրան: Նույնիսկ ներքին գործերի աշխատողները զարմանում էին քնքուշ ձայնով և փխրուն կազմվածքով այդ աղջկա տոկունության և արիության վրա: Տողերիս գրողի հետ մտերմիկ գրուցելիս Գևորգը երբեմն հիշում էր այդ ծանր տարիները: Մի անգամ, երբ տարել էին ծառահատման թե բեռնաթափման, մնացել էր գերանի տակ ու աջ կողմի երկու-երեք կողոսկրները կոտրվել էին և անկեղծանալով՝ ասաց, թե այդ օրերին Ալինան անակնկալ այցելության էր եկել ու ինքը ստիպված էր «ձիգ կերպարանքով (իր բառերն են), մի կերպ ցավերը զսպելով դնալ տեսակցության, որպեսզի նա չզգա իր հետ պատահածը»:

Աղջկա արիությունն այդչափ ոգեշնչող էր ...

Իր գիտական մակարդակով Գ. Աբգարյանն առանձնանում և հարգանք էր վայելում աքսորականների մոտ, որոնք հարսնացուին ճանապարհելիս ուղեկցում էին նրան կալանավայրի վտանգավոր տեղանքներում, որտեղ ուժեղ էր իրավազանցների ազդեցությունը: Հատկապես հաշվի առնելով նրա լատիներենի իմացությունը՝ կալանավայրի բժշկական անձնակազմը հաճախ խնդրում էր վերձանել բուժաշխատողներին հատուկ անընթեռնելի ձեռագրով գրված դեղատոմսերը և թարգմանել ռուսերեն: Կալանավայրում Աբգարյանը մտերմացավ էստոնացի գիտնական, թարգմանիչ Բորիս Կաբուրի հետ, որը հետագայում հիշում է՝ «Սասունցի Դավիթ» հայկական էպոսը էստոներեն թարգմանելու «մտադրության և ոգեշնչման համար պարտական է Գ. Աբգարյանին»⁵:

Ստալինի մահից և Բերիայի գնդակահարումից հետո Գ. Աբգարյանը 1955 թ. մարտի 19-ին ժամկետից շուտ ազատվեց կալանքից, ու տարիների փորձություններ թրծված հավատարմությունը պսակվեց երջանիկ գույգի ամուսնությունում, որից ծնվեցին Արմենուհին (1955 թ.), Անահիտը (1957 թ.) և Վահագնը (1958 թ.): Սակայն Ալինան, դեռևս երիտասարդ, անակնկալ հիվանդացավ և, դժբախտաբար, 1963 թ. 40 տարեկան հասակում կնքեց մահկանացուն՝ թողնելով փոքրահասակ երեխաներին: Ծակատագրի այս նոր հարվածը Գ. Աբգարյանը ստիպված էր մի քանի տարի միայնակ հաղթահարել, մինչև որ 1968 թ. ամուսնացավ իր ուսանողական ընկերուհի Էմմա Գասպարյանի հետ, ով նրա հետ կիսեց երեխաների խնամքի, դաստիարակության և կրթության հոգսը:

Գ. Աբգարյանի գիտական գործունեությունը սկսվեց գիտական հայտնաբերություններով: 1946 թ. ԵՊՀ-ում իր ավարտական դիպլոմային աշխատանքում ցույց տվեց, որ Մադաքիա Աբեղային կամ Վարդան Արևելցուն վերագրվող «Պատմություն վասն ազգին նետողաց» ձեռագիրը մատչան

⁵ Sassuuni Davith. Armeenia keelest tõlkinud Boris Kabur. Tallin, 1975, l. 178.

իրականում պատկանում է XIII դ. պատմիչ Գրիգոր Ակներցուն, և վերջինիս անվամբ էլ մոնղոլական արշավանքներին վերաբերող այդ երկը թարգմանվել է անգլերեն, թուրքերեն ու վրացերեն:

Այս ընթացքում ճարտարապետ Մարկ Գրիգորյանի նախագծով կառուցվեց Մատենադարանի հոյակապ շենքը՝ Մաշտոցի պողոտայի հյուսիսային ծայրում՝ դեպի Երևան նայող բլրի վրա: Մատենադարանը նորակառույց շենք է փոխադրվել 1959 թ., իսկ 1962-ին՝ կոչվել Մեսրոպ Մաշտոցի անվան: 1954–1982 թթ. Մատենադարանի հիմնադիր տնօրենն է եղել ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը, որի ջանքերով հաստատությունը կարճ ժամանակամիջոցում ձեռք բերեց միջազգային ճանաչում: Նրա հանձնարարությամբ՝ նորակառույց Մատենադարանի շենքի և ձեռագիր գանձերի մասին «Մատենադարան» գիրքը՝ 126 էջ ծավալով, գրեց Գ. Աբգարյանը բազմալեզու ընթերցողների համար՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն՝ 1962 թ., իսկ լեհերեն՝ 1965 թ.:

1954 թ. Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի գիտությունների ակադեմիաների իսկական անդամ, Քեմբրիջի (Անգլիա) համալսարանի պրոֆեսոր Վ. Ֆ. Մինորսկին նամակով Հայաստանի գիտնականների ուշադրությանը ներկայացրեց Յո. Մարկվարտի «Die Provinz Parskahajk» գերմաներեն աշխատության հեղինակային ձեռագիրը⁶: Այդ հետազոտությանը վերջինս նպատակ էր դրել վերականգնել Պարսկահայքի տեղագրությունը և դրա գրաված տարածքը ճշգրտելու համար օգտագործել էր բազմաթիվ սկզբնաղբյուրներ հին ու նոր լեզուներով (հայերեն, հունարեն, արաբերեն, լատիներեն, ասորերեն, պարսկերեն, պահլավերեն, հին եբրայերեն և այլն), ինչպես և հայ, գերմանացի, ֆրանսիացի, անգլիացի ու այլ հեղինակների ավելի քան 100 հետազոտություն: Արդյունքում Մարկվարտը բացահայտեց բազմաթիվ նոր տվյալներ հայ ժողովրդի պատմության, մատենագրության և ընդհանուր բանասիրության բնագավառում:

1960–1961 թթ. հետևելով Մինորսկու ուշադրով առաջարկին՝ Աբգարյանն առաջինը ձեռնարկեց Մարկվարտի եզակի ուսումնասիրության հետազոտումը՝ նվիրված Մեծ Հայքի Աշխարհացույցի 7-րդ նահանգ Պարսկահայքին⁷: Նախկին ռազմագերու ձախավեր ճակատագիրն ուղեկցել է նույն

⁶ 1946 թվին, երբ Խորհրդային Միության ղեկավարությունն արդեն հարց էր բարձրացրել ֆաշիստական Գերմանիայի դաշնակից Թուրքիայի առաջ՝ վերադարձնելու հայ ժողովրդից խլված պատմական հողերը, Վ. Ֆ. Մինորսկին հանդես էր եկել քաղաքական հայտարարությամբ, որում դատապարտում էր Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Էռնեստ Բեկին թուրքիայի վարչապետ Սարաջոլլուի հայտարարությունը պաշտպանելու համար՝ իբր Կարսի և Արդահանի տարածաշրջանում հայեր գոյություն չեն ունեցել: Հիշեցնելով Հիտլերի խոսքերը, թե «ո՞վ է այսօր հիշում հայերի կոտորածի մասին»՝ Մինորսկին մատնանշում էր՝ մարդկության հիշողությունը այնքան էլ կարճ չէ և նա հիշում է, թե ինչպես վարվեցին երիտթուրքերը հայերի հետ:

⁷ Գ. Աբգարյան. Հ. Մարկվարտի «Պարսկահայք նահանգը» անտիպ ուսումնասիրությունը. — ՊԲՀ, 1961, № 1, էջ 180–184, Յո. Մարկվարտ. Պարսկահայք նահանգը. — նույն տեղում, էջ 185–207, 1961, № 2, էջ 212–244 (գերմա-

նիսկ անվանի գիտնական Գ. Աբգարյանին: Իր կենսագրության վերը բերված հանգամանքների հետևանքով հնարավորություն չունենալով անձամբ թղթատել Մարկվարտի գիտական արխիվը, որը պահվում է Իտալիայում՝ Հռոմի «Pontificio istituto Biblico» (այսինքն՝ պապական) գրադարանում՝ Գ. Աբգարյանը ստիպված էր այդ անտիպ ժառանգությունը ուսումնասիրել Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում՝ Հռոմից ստացված ոչ կատարյալ լուսապատճենների միջոցով, այն ժամանակվա խոշորացնող պարզագույն հարմարանքով, որն անհարմարություններ էր պատճառում գիտնական-ընթերցողին: Նա ստիպված էր տող առ տող հաղթահարել դժվարընթեռնելի գերմաներեն ձեռագրի լուսատիպը, միաժամանակ վերծանել ձեռագրում սփռված հունարեն, ասորերեն ու արաբերեն վկայությունները՝ վերականգնելով անընթեռնելի տեղիներն անհրաժեշտ ծանոթագրումներով: Շուտով անտիպ աշխատության հայերեն թարգմանությունը ներկայացրեց հայ ու օտար գիտական շրջանների դատին: Այդ թարգմանության և կատարված հետազոտության արձագանքն այնքան մեծ էր, որ 1966 թ. Մարկվարտի «Պարսկահայք նահանգը» աշխատությունը լույս տեսավ ֆրանսերեն, և դրա թարգմանության համար բնագիր ծառայեց Գ. Աբգարյանի հայերեն թարգմանությունը⁸. մի փաստ, որը հազվագյուտ է գիտական թարգմանությունների պատմության մեջ:

Դեռ 2005 թ. սեպտեմբերի 6-ին, երբ Գերմանիայից հրավիրված հյուրերի մասնակցությամբ և Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանի նախագահությամբ ետմահու հանդիսավոր նշվեց Մատենադարանի հնաբնակ դոկտոր Գ. Աբգարյանի ծննդյան 85-ամյակը, իմ ելույթում նրա ժառանգների ուղադրությունը հրավիրեցի այն կարևոր փաստի վրա, որ, բացի Մարկվարտի «Պարսկահայք նահանգի» հայերեն թարգմանությունից, Աբգարյանը վերծանել ու ճշգրտել է նույնի գերմաներեն բնագիրը և, փաստորեն, այն լրիվ պատրաստ է գերմաներեն լեզվով հրատարակության, որով սերտորեն իրար են կապվում գերմանացի ու հայ երկու խոշոր հայագետների անունները:

Գ. Աբգարյանը մեկ անգամ չէ, որ գիտական շրջանների ուղադրության է արժանացրել գերմանացի հայագետների անտիպ մեծարժեք գործերը: Այդպիսին է գերմանացի լեզվաբան Յոզեֆ Կարստի (1871–1962) «Միջին հայերենի բառարանը», որի մասին նա հանդես եկավ ԵՊՀ-ի «Բանբեր»-ում 1995-ին⁹: Այստեղ չեմ կարող չընդգծել Մատենադարանի ղեկավարության բարյացկամ, կասեի՝ նրբանկատ վերաբերմունքը, որը ի հիշատակ Գ. Աբգարյանի՝ Կարստի անտիպ «Միջին հայերենի բառարանի» վերծանումը և քննությունը վստահեց Գ. Աբգարյանի դեռևս սկսնակ որդուն՝ Վահագն

ներեն անտիպ բնագիրը թարգմանեց, ծանոթագրեց և պատրաստեց հրատարակության Գ. Վ. Աբգարյանը):

⁸ Introduction à la Province de Parskahayk՝. Une etude inedite de J. Markwart; La Province de Parskahayk՝ [Գ. Աբգարյանի «Հ. Մարկվարտի «Պարսկահայք նահանգը» անտիպ ուսումնասիրությունը» աշխատության ֆրանսերեն թարգմանությունը]. – “Revue des Études Arméniennes (Nouvelle Série)”. Paris, 1966, T. III, pp. 245–314.

⁹ «Բանբեր Երևանի համալսարանի», 1995, թիվ 2, էջ 183–186:

Աբգարյանին, որն այս ընթացքում իր լեզվական գիտելիքներով լիովին արդարացրեց այդ վստահությունը:

1912 թ. հայ ժողովուրդը նշեց Հայոց գրերի գյուտի 1500-ամյա հոբելյանը: Այդ նշանավոր տարելիցի առթիվ Յո. Մարկվարտը Վիեննայի «Հանդես ամսօրյա»-ում հանդես եկավ հիմնարար ուսումնասիրությամբ՝ իր հարգանքի տուրքը մատուցելով հայ ժողովրդի գրի և դպրության հանճարին: Այդ հետազոտության հիմնադրույթներով երիտասարդ եռանդուն գիտնականը զեկուցում էր կարդացել դեռևս 1902-ին Համբուրգում կայացած Միջազգային կոնգրեսում, որի համար 1904-ին արժանացավ Մոսկվայի Լազարյան ճեմարանի մրցանակին:

1962 թ.՝ Մաշտոցյան հոբելյանից ընդամենը կես դար անց, նշվեց Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը: Եվ ահա գերմանացի մեծ հայագետին փոխադարձ հարգանք մատուցելով և, կարծես, նրան Մաշտոցյան հոբելյանին մասնակից դարձնելու համար՝ Գ. Աբգարյանը վերստին թարգմանեց Հայոց այբուբենին նվիրված Մարկվարտի աշխատությունը «Հայոց այբուբենի ծագումը և ս. Մաշտոցի կենսագրությունը» վերնագրով¹⁰:

Յո. Մարկվարտի նկատմամբ Գ. Աբգարյանի հիացմունքն առանձնակի ուժով դրսևորվեց գերմանացի մեծ հայագետի ծննդյան 100-ամյա հոբելյանին նվիրած հոդվածում¹¹, գրված գիտնականի ու բեկերիստի յուրատեսակ փայլուն ոճով, որը ինձ ուղեկցում է 1965 թվականից և տպավորված է հիշողությանս մեջ այնպես, որ Գ. Աբգարյանի ծննդյան 100-ամյակի առթիվով սույն անդրադարձը գրելիս կարիք չունեի կրկին թարգմանելու հիշողությանս մեջ նույնիսկ մանրամասները: Դրանց մեջ խորաքանդակի պես դրոշմված էր այն ժամանակվա գերմանական ռայխի թրքամոլության և գերմանական գիտական մտքի վեհության հակադրությունը, որն արտահայտված է Գերմանիայի և Թուրքիայի ռազմական դաշնությամբ ու գերմանացի հայագետների գիտական բարձր գաղափարներով: Այս ֆոնի վրա էլ ցուցադրվում է գերմանացի մեծ հայագետ Մարկվարտի հայագիտական բազմաբեղուն ժառանգությունը, որի մեջ ցայտուն դրսևորվել է հայ ժողովրդի ստեղծած բազմադարյան դպրության ու մշակույթի խորամուխ ընկալումը և բարձր դրվատանքը:

Թվում էր, թե Մարկվարտի “Die Provinz Parskahajk” աշխատության հայերեն թարգմանությունը, վերձանումն ու բազմակողմանի քննությունը ավելի քան բավարար պետք է լիներ արդեն քառասունն անց բազմափորձ գիտնականի համար՝ թեկնածուական դիսերտացիայի հայց ներկայացնելու: Բայց Գ. Աբգարյանն այդ ասպարեզն ընտրել էր մի ավելի մեծ գիտական սխրանքի համար, և դրանից երկու տարի անց նա պաշտպանության ներկայացրեց հայ մատենագրության մի ավելի պրոբլեմատիկ պատմական երկի թեմա՝ «Սեբեոսի պատմությունը և Անանունի առեղծվածը»: 1965 թ. Մատենադարանի գիտական խորհուրդն այդ դիսերտացիայի համար նրան շնորհեց ոչ թե թեկնածուի, այլ միանգամից դոկտորի գիտական աստիճան,

¹⁰ «Մեսրոպ Մաշտոց» հոդվածների ժողովածու, Երևան, 1962, էջ 117–180:

¹¹ Գ. Աբգարյան. Յոզեֆ Մարկվարտ (ծննդյան 100-ամյակի առթիվ). – ՊԲՀ, 1965, № 2, էջ 149–156:

ինչը հազվագյուտ երևույթ է, և դա հաջողությամբ հաստատվեց նաև ՍՍՀՄ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի որոշմամբ: Այն լույս տեսավ առանձին գրքով՝ նույն վերնագրով 1965 թ. Գիտությունների ակադեմիայի հրատարակչության կողմից 252 էջ ծավալով: Բուն «Պատմություն Սերբոսի» մատյանը՝ հարուստ ծանոթագրություններով և բազմալեզու հեղինակների մանրամասն քննության վկայակոչումներով, դոկտոր Գ. Աբգարյանը հրատարակեց 1979 թ. (466 էջ ծավալով):

Գ. Աբգարյանի աշխատությունները նվիրված են հայ միջնադարյան գրականությանը, ձեռագրագիտությանը, հայ-հունական, հայ-վրացական, հայ-սլավոնական, հայ-ֆրանսիական, հայ-գերմանական մատենագրական աղբյուրներին, եվրոպական հայագիտության պատմությանը: Աբգարյանը գերմաներենից հայերեն է թարգմանել Յո. Մարկվարտի, Հանս Վալտեր Պոլի, Լինոս Բենակիսի ու այլոց հայագիտական ուսումնասիրությունները, լուսաբանել է միջին գերմաներենում արծարծված հայկական թեմաները: Նա սևեռուն հետաքրքրություն էր տածում եվրոպական հայագիտության նշանավոր դեմքերի և, հատկապես, գերմանացի հայագետների ուսումնասիրություններին. լայնախոհ գիտնականի տեսադաշտում էին XX դ. Հայոց Մեծ եղեռնի մասին գերմանացի հեղինակների գրական երկերն ու հրապարակումները՝ Յոհան Կերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» պատմավեպը¹²:

Գ. Աբգարյանը կազմել է «Հայկական աղբյուրները Աբխազիայի և աբխազների մասին» ուսանելի ժողովածուն: Առանձին հոդվածներ է նվիրել բազմաթիվ հին ու նոր գրողների և բանաստեղծների՝ Խորենացի, Նարեկացի, Լամբրոնացի, Թլկուրանցի, Կարապետ Վիպող, Աբովյան, Բաֆֆի, Իսահակյան¹³, Վարուժան, Վերֆել, Խեչումյան ու այլք: Նրա գրչին է պատկանում նաև եվրոպական ու ամերիկյան հայագետներին և հայագիտության պատմությանը նվիրված հոդվածների շարքը: 1975–1976 թթ. Աբգարյանը ԵՊՀ-ում դասավանդել է հայ թարգմանական մատենագրության պատմություն:

Գերմանուհի Գաբրիելե Վինկլերը (ծնվ. 1940 թ.) Գերմանական հայագիտության ներկայումս գործող նշանավոր դեմքերից է. Հոմոմում, Մյունխենում, Օքսֆորդում ուսումնասիրել է հայերեն, վրացերեն, ասորերեն, ղպտիերեն, եթովպերեն: 1986 թ. նա մասնակցեց Երևանում կայացած անդրանիկ

¹² Գ. Աբգարյան. Պոֆ. Հանս Վալտեր Պոլ (Քյոլն), Յոհան Կերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» (Թարգմ. գերմաներենից Գ. Աբգարյանի). – ՊԲՀ, 1973, № 2, էջ 105–112, նույնի՝ Դանիել Վարուժան և Յոհան Կերֆելի. – «Գրական թերթ», 01. VI. 1984, նույնի՝ Թադված զանգերի ղողանջը (Յոհան Կերֆելի մասին). – «Սովետական Հայաստան», 1985, № 4, էջ 28–31, նույնի՝ Ալմա Մահ-լեր-Վերֆել. «Իմ կյանքը» (Յոհան Կերֆելի կնոջ մասին). – «Հայրենիքի ձայն», 18. VI. 1986, նույնի՝ Յոհան Կերֆելի փրկած մի երգ. – «Հայրենիքի ձայն», 26. IX. 1990, նույնի՝ Ծննդյան ճրագալույց երեկոն. Մեծ մարդասերը, հայ ժողովրդի մեծ բարեկամը (Յոհան Կերֆելի մասին). – «Հայրենիքի ձայն», 10. VI. 1991:

¹³ Գ. Աբգարյան. Իսահակյանագիտությունը 1984-ին (Ա. Մուշեղյանի «Ավետիք Իսահակյան՝ վաղ տարիներ» մենագրության մասին). – «Գրական թերթ», 30. XI. 1984:

Միջազգային հայագիտական սիմպոզիումին: 1994 թ. Հռոմում գերմաներեն հրատարակեց «Կորյունի՝ Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը – թարգմանություն և մեկնաբանում» վերնագրով ստվարածավալ և մանրախուզ աշխատությունը¹⁴:

Վինկլերի այս գիրքը նույնպես չվրիպեց Գ. Աբգարյանի ուշադրությունից և նա դրան նվիրեց երկու հոդված՝ «Գերմանական մաշտոցագիտությունն ու նոր նվաճումը»¹⁵, ապա և՛ ««Մաշտոցի Վարքը» գերմաներեն թարգմանությունը և կորիւնագիտական այլ խնդիրներ»¹⁶: Կարելի է մի ամբողջ հոդված գրել միայն այս գրքի քննության ու բարձրացրած հարցերի վերաբերյալ, սակայն չսպառել դոկտոր Աբգարյանի սուր դիտողականությունը ու դիպուկ գնահատականների այն արտառուց ջանքը և ազնիվ մղումը, որով հայ գիտնականը ձգտում է հայ ընթերցողին լիովին հասցնել գերմանուհի հայագետի տքնաջան պրպտումները¹⁷:

Կորյունի նախորդ երեք թարգմանությունները, որոնք լույս են տեսել 1841-ին Տյուբինգենում, 1927-ին Մյունխենում և 1963-ին Դյուսելդորֆում, կատարված են թերի գրաբար տեքստերից, մինչդեռ Վինկլերի թարգմանությունը հիմքում ունի Մ. Աբեղյանի 1941 թ. քննական հրատարակությունը՝ իր ծանոթագրումներով: Ամբողջական տեքստը և մանրակրկիտ ծանոթագրումները հնարավորություն են տվել գերմանուհի թարգմանչին անհամատեղ ծավալուն ու բազմակողմանի քննության բացահայտել և գերմանացի հայագետներին ու մասնագետ ընթերցողներին մատուցել IV–V դդ. հայ մեծ լուսավորիչ, Հայ գրերի գյուտի և Հայոց այբուբենի մեծ երախտավոր Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գրաստեղծ գործունեությունը:

Մ. Աբեղյանի հրատարակությունը Գ. Աբգարյանի գնահատմամբ «մեկնաբանությունների լիակատարությամբ ունի հանրագիտարանային արժեք: Մաշտոցագիտական որոշ խնդիրներ այնտեղ ներկայացված են նոր լույսի տակ: Դրանցից է նաև Մեսրոպ Մաշտոցի և Մոպսուեստիայի եպիսկոպոս Թեոդորոսի կապերի խնդիրը: Թեոդորոսը Անտիոքում քահանա¹⁸ եղած տարիներին գրել է պարսից մոզերի դեմ մի գրվածք, ուղղված ծագումով հայաստանցի քորեպիսկոպոս Մաստուբիոսին: Արիչանը դեռևս 1901 թ. «Հայապատում» Մաստուբիոսին կոչում է Մաշտոց: Նրան հետևել են Ն. Աղոնցը և շատ ուրիշներ: Ն. Ակինյանը ենթադրել է, թե Մաշտոցը 380-ական թվականներին կրթություն է ստացել Անտիոքում, Լիբանիոսի դպրոցում և այդ ընթացքում ծանոթ է եղել Թեոդորոսին: Վերջինիս քահանա (պրեսբիտեր) լինելու և մոզերի դեմ գրելու մասին տեղեկությունը մասնագետները քաղել են Փոտ պատրիարքի «Մատենադարան» կամ «Բիւրամատեան»

¹⁴ Winkler Gabriele. Koriwns Biographie des Mesrop Maštoc'. Übersetzung und Kommentar, Orientalia Christiana Analecta 245. Rom, 1994.

¹⁵ Գ. Աբգարյան. Գերմանական մաշտոցագիտության նոր նվաճումը. – «Հայաստան», 18. V. 1995:

¹⁶ Տե՛ս «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), 1996, թիվ 1–12, էջ 454–473:

¹⁷ Մանրամասն տե՛ս Գ. Աբգարյան. Գերմանական մաշտոցագիտության նոր նվաճումը:

¹⁸ «Քահանա» տիտղոսը Գ. Վինկլերի գերմաներեն տեքստում առկա է presbyter ձևով, որը, ըստ իս, պետք է հայերեն թարգմանել «երէց»:

Հատորից: Սակայն 1959 թ. Փարիզում հրատարակված «Մատենադարանում», որը Փոտի երկի քննական բնագիրն է, Թեոդորոսի անվան դիմաց բացակայում է «պրեսբիտեր» (քահանա) տիտղոսը: Սույն նորոգված «Մաշտոցի վարքի» գերմաներեն թարգմանությունում բերված է ցույց տալու համար, որ Մաշտոցին և Մուսուկեստացուն միմյանց հետ կապելու նպատակով վկայակոչված «պրեսբիտեր» տիտղոսը դադարում է հաստատ կռվան հանդիսանալուց:

... Ընդհանրապես տիկին Գաբրիելե Վինկլերի մենագրությունում ուսումնասիրված են գրերի գյուտի ժամանակաշրջանին առնչվող պատմական կարևոր իրադարձությունները, նորովի են վերլուծված գրավոր հուշարձանները, բացահայտված են նոր իրողություններ: Այս առումով մենագրությունն ունի պատմագիտական լուրջ արժեք և չպետք է վրիպի մասնագետների ուշադրությունից»¹⁹:

Ինքնին հասկանալի է, որ Հայոց գրերի գյուտին վերաբերող գերմաներեն հրատարակության մեջ պետք է շոշափվեր նաև Մ. Մաշտոցի ստեղծած վրաց գրերի խնդիրը: «Գ. Վինկլերը համոզված է, — գրում է Գ. Աբգարյանը, — որ վրացերենը պաշտոնական լեզու է ընդունվել միայն քրիստոնեություն ընդունելուց հետո: Ըստ այսմ էլ հավանական է համարում, որ վրացական գրերը նույնպես ստեղծվել են միևնույն առիթով: Այս համոզմունքից հետո, թվում է, թե պետք է հաջորդեր Մաշտոցի հեղինակության ընդունումը: Սակայն հարգարժան հեղինակը գրում է. «Հայկական և վրացական այբուբենների մի ուշագրավ համեմատություն է մեզ մատուցում Պատարիձեն»²⁰: Վերջինս իր գերմաներեն հոդվածում փորձ է անում գտնել գծագրական ընդհանրություններ հայկական որոշ տառերի և, իբր, վաղուց գոյություն ունեցած վրացական գրերի միջև: Սա դիվանագիտական քայլ է, որով կողմնակիորեն գլխի է գցվում, թե հայկական այբուբենը ստեղծվել է վրացականից հետո և վրացականի օգտագործմամբ: Եթե մինչ այդ վրացագետները բավարարվում էին միայն Մաշտոցի վաստակը ժխտելով, ապա այժմ «ապացուցում են» Մաշտոցն ինքն է հայկական այբուբենը ստեղծելիս օգտվել վրացական տառերից: Սակայն մասնագետներին քաջ հայտնի է, որ գծագրական առնչությունների հիման վրա այբուբենների ժամանակագրական հերթականությունը որոշել հնարավոր է միայն այն դեպքում, եթե ստույգ հայտնի է երկու այբուբենի ստեղծման ժամանակը: Այլապես՝ գծագրական յուրաքանչյուր ուսումնասիրություն նմանվում է 6 և 9 թվանշաններով խաղին: Եթե 6-ը գլխավոր շրջենք՝ կդառնա 9:

Բելգիացի արևելագետ Պ. Պետերսն արդեն նկատել է, որ վրացագետներին հուզում է ոչ այնքան իրենց այբուբենին օտար ծագում վերագրելը (նրանք գերադասում են վրացական տառերը բխեցնել հեռավոր ու մեռած փյունիկյան կամ արամեական գրություններից և ոչ թե դրկիցների կենդանի այբուբենից), որքան «այն որ լուսավորությունը ծագել է Հայաստանից»: Իսկ սա նշանակում է, որ հարցը քննվում է ազգային արժանապատ-

¹⁹ Գ. Աբգարյան. «Մաշտոցի Վարքը». գերմաներեն թարգմանությունը և կորիւնագիտական այլ խնդիրներ:

²⁰ Գ. Աբգարյան. Գերմանական մաշտոցագիտության նոր նվաճումը:

վոլթյան դիրքերից: Նման պայմաններում ճշմարտությունը բացատրելու առաքելությունը մնում է օտար գիտնականներին, որոնք հայ-վրացական շահագրգռություններից պետք է որ հեռու կանգնեն և ուսումնասիրությունը վարեն անկողմնակալ քննությամբ»²¹:

Գ. Վինկլերի աշխատության վերաբերյալ այս կարևոր ցուցումների հետ միասին Գ. Աբգարյանը ուշագրավ դիտողություն է անում, որ 1991 թ. աշխատությունն ավարտելուց հետո՝ մինչև 1994 թ. գրքի լույս ընծայումը, լույս տեսած ուսումնասիրությունները, բնականաբար, չեն քննարկվել: Շարունակելով այս միտքը՝ հարկ եմ համարում ընդգծել, որ Մաշտոցագիտությունը հաջորդ տասնամյակներում ապրեց բուռն զարգացման նոր շրջան՝ շնորհիվ Հայ գրերի գյուտի և Մաշտոցի հետ կապված հոբելյանների²²:

«Գուլիելմոս Պոստելը 1538 թ. Ֆրանսիայում և Թեոդոս Ամբրոսիոսը 1539 թ. Իտալիայում իրենց աշխատություններում տպագրել են հայկական տառերի նմուշներ, — գրում է Գ. Աբգարյանը: — Սրանք մինչև այժմ համարվում էին ամենավաղ տպագրությունները: Սակայն վերջերս մեզ վիճակվեց պարզել, որ Մեսրոպ Մաշտոցի ստեղծած այբուբենի տպագրության հայրենիքը Գերմանիան է, և որ այբուբենը տպագրվել է առաջին անգամ դեռևս 1486 թ.»²³: Եվրոպական տպագրության մեծ հայտնագործող Գուտենբերգի մահից 18 տարի անց Մայնցում Բերնհարդ Ֆոն Բրայդենբախի «Ուխտագնացություն դեպի Ավետյաց երկիր» ուղեգրության հետ տպագրվել է ժամանակի նշանավոր հոլանդացի նկարիչներից Ռեուվիխի ձեռքով գծված մեսրոպյան փայտափորագիր հայերեն այբուբենը՝ վերևում դրոշմված հայերեն անուններով: «Մարդկությունն ակնածանքով է հարգում Գուտենբերգի հիշատակը, — շարունակում է Գ. Աբգարյանը, — Գրքեր տպագրելիս ոչ ոք չի նեղվում այն փաստից, որ Գուտենբերգը գերմանացի է: Երախտագիտությունը բարձրագույն առաքելություն է»²⁴:

1996 թ. տողերիս հեղինակը պաշտպանեց դոկտորական ատենախոսություն «V դարի հայ մատենագրության ժամանակագրական խնդիրներ» թեմայով հեղինակների և նրանց երկերի դասակարգումը նոր տեսանկյունից: Պաշտոնական ընդդիմախոսներն էին ԳԱ փոխնախագահ Գագիկ Սարգսյանը, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանից դոկտոր Գևորգ Աբգարյանը և ԵՊՀ-ից դոկտոր Պողոս Խաչատրյանը: Պաշտպանությունը նշանակված էր նոյեմբերի 1-ին ժ. 12-ին: Գիտեի, որ դոկտոր Աբգարյանն անկողնային հիվանդ է, ուստի նախորդ օրը երեկոյան զանգեցի իրեն՝ տեղեկա-

²¹ Նույն տեղում:

²² 1990-ական թվերին տողերիս գրողը նոր տեսանկյունից է բացահայտել Մաշտոցի գործունեությունը՝ ցույց տալով, որ նա հեթանոս դպրապետների աշխատությունների հիման վրա վերականգնել է հին Հայոց այբուբենը և նշանագրերը. տե՛ս А. Мушегян. Армянские буквы за более чем четыре века до Месропа Маштоца. — «Голос Армении», 23. V. 2006; Ն ու յ ն ի՝ Մեսրոպ Մաշտոցը և նախամաշտոցյան հայ գիրը. — ՊԲՀ, 2006, № 2, էջ 210–236, Ն ու յ ն ի՝ Մեսրոպ Մաշտոցը և նախամաշտոցյան հայ գիրը (լրացված տարբերակը՝ գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու), Երևան, 2006, էջ 79–98:

²³ Գ. Աբգարյան. Գերմանական մաշտոցագիտության նոր նվաճումը:

²⁴ Նույն տեղում:

նալու առողջության մասին: Նա պատասխանեց, որ, ցավոք, չի կարող ներկայանալ պաշտպանությանը, բարձր է գնահատում իմ աշխատանքը և ի սրտե հաջողություն մաղթեց ինձ: Միայն խնդրեց փոխանցել Գրականության ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս էդ. Ջրբաչյանին, որ ընդգիծախոսի իր կարծիքը հանձնարարվի կարգալ միայն Հին գրականության բաժնի գիտաշխատող, դոկտոր Արշալույս Ղազինյանին: Նրա այս խնդրանքից, հասկացա, թե նա ինչպիսի հարգանք էր տածում վերջինիս նկատմամբ իբրև մարդու և գիտնականի, և նույնիսկ քառորդ դար անց նրա ցանկությունը չեմ մոռանում:

Դոկտոր Գևորգ Աբգարյանը վախճանվեց 1998 թ. մայիսի 15-ին 78 տարեկան հասակում: Ստորև բերվող իմ բանաստեղծությունն այդ տխուր առիթով տպագրվեց Գիտությունների ակադեմիայի «Գիտություն» թերթում 1998 թ. հունիսին № 12-ի 4-րդ էջում:

ԴՈԿՏՈՐ ԳԵՎՈՐԳ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ

Մեր կյանքում միայն նա է վեհ մնում,
Ով նախընտրում է վեհը թեթևից.
Մարդ կա, որ պատվի ետքից է գնում,
Մարդ կա՝ պատիվն է գնում ետևից:

Դու՝ սիրտդ բարի բացած բոլորին,
Տքնեցիր անդուլ, ոգու ցնծումով.
Դու հակվում էիր մագաղաթներին
Հին գրչի նման՝ մոմով ու ծոմով:

Կռիվ, գերություն, զնդան ու աքսոր
Անկարող եղան քո միտքը սանձել,
Եվ հեռանալով թողնում ես այսօր
Հին մատյաններին համարժեք գանձեր:

ԱԼԲԵՐԳ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Բ. Գ. Է., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի Հայ Հին մատենագրության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայ-գերմանական գրական առնչություններ, Հայ Հին գրականություն, թարգմանչություն, ուրարտական արձանագրությունների նոր վերծանումներ և Հին Արևելքի լեզուներում նախամաշտոցյան Հայերեն բազմաթիվ բառերի բացահայտումներ: Հեղինակ է 3 գրքի և 150-ից ավելի հոդվածի: albert.musheghyan@yandex.com